Նվեր Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր - Անտանտ, Եռյակ դաշինք, մանդատ, բոլշևիզմ, նացիոնալիստ, «Վիլսոնյան լիգա», «Ազգային կոնգրես»:

20-րդ դարի սկզբներին նոր տարածքներ ձեռք բերելու տերությունների ձգտումը հրաբխավեժ ուժգնությամբ ցնցեց ամբողջ աշխարհը, և բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը (1914 թ. օգոստոսի 1) երկու հակադիր ռազմական խմբավորումների՝ Եռյակ կամ Քառյակ դաշինքի և Անտանտի միջև: Համաձայն 1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարի՝ Անտանտը պահանջեց Թուրքիային զորքերը դուրս բերել Անդրկովկասից: Նույն թվականի նոյեմբերի 11-ին կապիտուլիացիայի ենթարկվեց Գերմանիան, և ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը Անտանտի հաղթանակով:

Պարտություն կրած Օսմանյան Թուրքիան իր զորքերը հեռացրեց Անդրկովկասից, և Հայաստանի սահմանները ընդարձակվեցին: Այդժամ թուրքերը սարսափահար սպասում էին հաղթողների դատավճռին, իսկ հայ ժողովուրդը ցնծության մեջ էր: Հաշվի առնելով, որ հայությունը իր մասնակցությունն է ունեցել Կովկասի, Սիրիայի և Պաղեստինի ճակատներում, մեծ հույսեր էր կապում դաշնակիցների հաղթանակի հետ և սպասում, որ կլուծվի իր արդար դատը՝ համաձայն դաշնակիցների կողմից հուսադրող հայտարարությունների, որ պետք է «Հայաստանը վերջնականապես ազատագրել բռնապետութենէն մը՝ որուն նմանը պատմութեան մէջ չկայ: Ժողովուրդներու պատերազմը, որուն կը հետեւի ժողովուրդներու խաղաղութիւնը, պարտաւոր է, որ Հայաստանին բերէ իր կատարեալ անկախութիւնը»[1]:

Թեև պատերազմը աղետաբեր հետևանքներ ունեցավ և միլիոնավոր մարդկանց կորստի պատճառ դարձավ, կարելի է փաստել այն, որ հաղթող երկրները հնարավորություն ստացան միջամտելու այս ու այն երկրի գործերին: Ահա այդպիսի մի հնարավորություն էլ ձեռք բերեցին Անտանտի երկրները և գոտեպնդված ձեռք բերած հաղթանակով՝ դրեցին աշխարհի քաղաքական նոր վերաբաժանման սկիզբը: Նրանք՝ մասնավորապես Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, ԱՄՆ-ը և Ճապոնիան, պարտված երկրների հետ իրենց հաշիվները կարգավորելու նպատակով հրավիրեցին խաղաղության վեհաժողով Փարիզում, որը գումարվեց 1919 թ. հունվարին և տևեց մինչև 1920 թ. հունվարը:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը պաշտոնապես հրավիրված չէր վեհաժողովին, «մինչդեռ այնտեղ էին հրավիրվել Նիկարագուայի, Հոնդուրասի և այլ երկրների ներկայացուցիչներ, որոնք ոչ պատերազմ էին մղել, ոչ էլ զոհեր էին տվել»,[2] - գրում է Մ. Կարապետյանը, բայց և այնպես, որպես հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակից»՝ հայկական պահանջները ներկայացնելու համար

[1] Ա. Ահարոնեան, Պողոս Նուպար, Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ, Բոստըն, 1919, էջ 3:

[2] Միհեր Կարապետյան, Հայաստանը 1912-1920 թթ., Երևան 2003, էջ 305:

կազմվեց երկու պատվիրակություն. Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էին Ավ.Ահարոնյանը՝ որպես նախագահ, Մ.Պապաջանյանը, Հ. Օհանջանյանը անդամներ, և արևմտահայ պատվիրակությունը նախագահում էր Պողոս Նուբար փաշան, անդամներ Ա. Չոպանյանը, Վ.Թեքեյանը:

1918 թ. դեկտեմբերին մեր պատվիրակությունը մեկնեց Փարիզ՝ հուսալով, որ եկել է թուրքերի հատուցման ժամը: Համաշխարհային հանրության այնպիսի առաջադեմ գործիչներ, ինչպիսիք էին Անատոլ Ֆրանսը, Յոհաննես Լեփսիուսը, Վալերի Բրյուսովը, Յոզեֆ Մարկվարտը և շատ ուրշներ, Անտանտից պահանջում էին հայության դեմ գործած ոճրագործության համար պատասխանատվության ենթարկել Օսմանյան Թուրքիայի կառավարությանը: Նկատի ունենալով, որ Մեծ տերություններից մեծ հետաքրքրություն էր հանդես բերում միայն ԱՄՆ-ը՝ համաձայն Վ. Վիլսոնի 1919 թ. փետրվարին հնչեցրած հայամետ հայտարարության, ուստի հայ ժողովուրդը ակնկալում էր ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը: Վ.Վիլսոնը 1919 թ. ապրիլի 17-ին Փարիզում Պողոս Նուբարից փորձում է իմանալ հայերի կարծիքը իր կողմից արված հայանպաստ հայտարարության վերաբերյալ, ինչին Նուբար փաշան պատասխանում է. «Լաւ կը լինի այն ժամանակ, երբ Ձեր շնորհիւ Ամերիկան ընդունի Հայաստանի մանդան»[1]: Վ. Վիլսոնի հուսադրող պատասխանը չի ուշանում. «Ես էլ ցանկանում եմ, որ Հայաստանի մանդան Ամերիկան ընդունի: Կարող եմ վստահեցնել ձեզ, որ Ամերիկայի բոլոր լաւագոյն քաղաքացիների մտածումն ու զգացումն էլ այդ է: Եւ եթէ երբեք Ամերիկան որեւէ մանդա յանձն առնի, այդ կը լինի Հայաստանինը»[2]: Սակայն այս խոստումները մի շարք հակազդող հանգամանքների պատճառով, ցավոք, խոսքից գործի չվերածվեցին: Նախ ԱՄՆ-ի բարձրաստիճան քննչական հանձնախմբում ի նպաստ Թուրքիայի բավական մեծածավալ աշխատանք կատարեց հայտնի գործիչ Խալիտե Էդիպ խանումը (հրեա, ապա իսլամացած Էտիպի աղջիկը): Նա, ինչպես նաև Բեքիր Սամի բեյը իրենց հակահայ գործունեությամբ խափանեցին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը: Երիտթուրքական կոմիտեի ակտիվ անդամ Մեվլան Զադե Ռիֆաթը իր «Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները» գրքում ուշագրավ տեղեկություն է հաղորդում Խալիտե Էդիպի մասին: Պարզվում է, որ նա երիտթուրքական իշխանության տապալումից հետո առաջիններից է եղել, ով ամերիկյան քննիչ հանձնախմբից պահանջել է Ամերիկայի հովանավորությունը: Եվ, միաժամանակ, նամակագրական կապերով Մուստաֆա Քեմալին Թուրքիայի վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդել՝ զգուշացնելով, որ կործանվող Թուրքիայի փրկությունը Ամերիկայի հովանավորությունը ստանձնելն է և Ֆիլիպինյան կղզիներին օրինակ բերելով՝ ասում է. «Ոչ քաղաքակիրթ Ֆիլիպեան կղզիներն այսօր ինքնավար դարձնող Ամերիկան մեր հաշւոյն կուգա: 15-20 տարի տոկալէ ետք, նոր Թուրքիա մը, զարգացած իրական անկախութեան գաղափարը իւրացու-

[1] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան, (քաղաքական օրագիր), Պոսթըն,1943.,էջ 18-19:
[2] Նույն տեղում. էջ 18:

ցած Թուրքիայ մը, միայն Ամերիկան կրնայ ստեղծել»[1]: Այդ օրերին երևում է, որ նրանք, այնուամենայնիվ, վաստակել էին Ամերիկայի վստահությունը քանի որ Հայաստանի հետ կապված խնդիրներին անդրադառնալով՝ Էտիպը հուսադրող խորհուրդներ է տալիս՝ ասելով. «Ամերիկայի պաշտօնական շրջանակներուն մէջ ի նպաստ մեզի բաւական համակրութիւն մը յառաջացած է: Իբրեւ հայասէր Պոլիս եկող կարգ մը ամերիկացիներ, Թուրքիոյ բարեկամ եւ Թուրքիոյ բրոբականտիստը դառնալով՝ վերադարձան»[2]: Ռիֆաթի տեղեկությունից պարզվում է, որ Էտիպի կաբինետը քաջատեղյակ էր նաև Հարբորդի գործուղման առաքելությունից. դա երևում էր նրա հաղորդագրությունից, որով զգուշացնում էր. «Մինչեւ որ Սեբաստիոյ (նույնն է Սվազի) համաժողովը գումարուի, Ամերիկեան յանձնախումբը հոս ձգելու կը ջանանք, թերեւս համաժողովին Ամերիկայի թղթակից մըն ալ ղրկելու յաջողինք»[3]: Միանշանակ Էդիպի ուղարկած նամակը նպատակ ուներ հասկացնելու Մ. Քեմալին, որ մինչև Սվազի համաժողովը պետք է կողմնորոշվել և չհիասթափեցնել գեներալ Հարբորդին, որի առաքելությունը տեղի ունեցավ օգոստոսին, իսկ Սվազի համաժողովը կայացավ 1919 թ. սեպտեմբերին, որից հետո հայերի նկատմամբ ամերիկյան ջերմ վերաբերմունքը աստիճանաբար փոխվեց հօգուտ Թուրքիայի:

Կոնֆերանսի Չորսի խորհրդի գիտությամբ ԱՄՆ-ը Թուրքիա և Անդրկովկաս գործուղեց գեներալ-մայոր Ջեյմս Հարբորդի զինվորական առաքելությունը, որի գլխավոր նպատակն էր ուսումնասիրություններ կատարել նշված տարածքներում և պարզել Փոքր Ասիայում և Անդրկովկասում ԱՄՆ-ի շահերը շոշափող քաղաքական, ռազմական, վարչական, տնտեսական և այլ կարգի խնդիրներ[4]:

Այսպիսով, Հարբորդի առաքելությունը օգոստոսին Փարիզից ժամանեց Կ. Պոլիս:

Մինչ նա կժամաներ Կ.Պոլիս, Բեքիր Սամի Բեյը (ծագումով Հարավային Կովկասից) 1919 թ. հուլիսին Ստամբուլից եկավ Ամասիա և այնտեղ Մուստաֆա Քեմալին հայտնեց ԱՄՆ-ի առաջարկությունը՝ ընդունելու նրա մանդատը Թուրքիայի նկատմամբ՝ ամեն կերպ խրախուսելով նման քայլի անհրաժեշտությունը[5]: Պարզվեց, որ ինչպես Էդիպի, այնպես էլ Բեքիր Սամի բեյի թափած ջանքերը իզուր չէին անցել, քանի որ Հարբորդի հետ հանդիպման ժամանակ Քեմալն ասել էր հետևյալը. «Մեր նացիոնալիստների նպատակն է... պահպանել կայսրության տարածքների ամբողջականությունը՝ մեկ չշահագրգռված տերության, գերադասելի է Ամերիկայի մանդատի ներքո»[6]: Մ.Քեմալը լավ հասկանալով, որ Թուրքիայի փրկությունը Ամերիկայի հովանավորության տակ է, և ճշգրտորեն հետևելով Էդիպի և Բեքիր Սամի բեյի խորհուրդներին, ընդառաջեց Հարբորդին՝ ապահովագրելով Թուրքիայի անվտանգությունը: Նա Հարբորդի հետ հանդիպման

---

[1] Մէվլան Զատէ Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան 1990, էջ 139:
[2] Նույն տեղում. էջ 140:
[3] Նույն տեղում. էջ 141:
[4] Տե՛ս Գալուստ Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան 1999,էջ 209:
[5] Մակիչ Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան 1973, էջ 246:
[6] Գալուստ Գալոյան, նշվ. աշխ., էջ 214:

ժամանակ իրեն ցույց տվեց որպես Ամերիկայի բարեկամ, որից հետո 1919 թ. հոկտեմբերի 15-ին իր հայտարարության մեջ հստակորեն ընդգծեց. «Մենք վստահ ենք, որ միակ երկիրը, որ կարող է մեզ օգնել, Ամերիկան է»[1]:Դատելով Քեմալի 1919 թ. հոկտեմբերի 15-ի հայտարարությունից և հաշվի առնելով 1919 թ. հոկտեմբերի 21–ին մեր պատվիրակության հաղորդագրությունը, որ «քիչ են հույսերը որ Ամերիկան կընդունի Լլոյդ Ջորջի կոչերը Թուրքիայի վերափոխման մասին: Ո՛չ սենատը, ո՛չ խորհուրդը, ինչպես թվում է, չեն ցանկանում իրենց վրա պատասխանատվություն վերցնել՝ կապված մանդատի հետ»[2], կարելի էր եզրակացնել, որ թուրք-ամերիկյան հարաբերությունները կարգավորվում էին: Բայց Հարբորդին անհանգստացնում էր նաև այդ օրերին նկատվող բոլշևիկա-քեմալական մերձեցումը, ինչին ի պատասխան Քեմալը հուսադրում է. «Ինչ վերաբերում է բոլշևիզմին, ապա այդ ուսմունքն անընդունելի է մեր երկրի համար»[3]: Իսկ Մահմուդ Էսադն իր «Կանաչ խնձոր» հոդվածում այսպես էր ասում. «Մենք մեզանում չենք կարող պատվաստել բոլշևիզմը, որն առաջ է եկել Ռուսաստանի պայմանների և ռուսական ազգի կարիքների թելադրանքով: Կոմունիզմը ոչ թե իդեալ, այլ միջոց է մեզ համար»[4]: Տվյալ դեպքում նրանց իդեալը թուրքական ժողովուրդների միավորումն էր, իսկ կոմունիզմը նրանց համար Լենինի համակրանքը շահելու և Հայաստանի վրա հարձակվելու միջոց էր: Արդեն 1919 թվականի վերջերին Ստամբուլում գործում էին «Վիլսոնյան լիգա» և «Ազգային կոնգրես» կազմակերպությունները: Ստեղծված իրավիճակում Անտանտի մեծ տերությունները առավել նպատակահարմար գտան պահպանելու կործանվող Թուրքիայի ամբողջականությունը, վերջինիս ուղղել Ռուսաստանի դեմ՝ հնարավոր բոլշևիզմի տարածումը խափանելու համար, քանի որ բոլշևիկները ցանկանում էին Թուրքիան դարձնել մի հենակետ՝ հեղափոխությունն այլ երկրներում տարածելու և կենտրոնական կազմակերպությունների օգնությամբ արևմտյան երկրներում պրոպագանդա մղելու[5]: Այստեղ Հայաստանը մեկ անգամ ևս հայտնվեց «զոհի» կարգավիճակում, ինչից հետո մանդատի իրողությունը դարձավ երազանք:

Պատեհ առիթն օգտագործելով՝ Մ. Քեմալը 1919 թ. սեպտեմբերի 4-11-ը ընկած ժամանակահատվածում Սվազում հրավիրում է համաժողով և ընդունում որոշում, ըստ որի քեմալականները պետք է վճռական պայքար մղեն այն բոլոր շարժումների դեմ, որոնք իրենց առաջ նպատակ են դրել ստեղծել անկախ Հայաստան[6]: Դրանով Քեմալը Թուրքիայում նոր իշխանության սկզբնավորման հիմք դրեց, իսկ գեներալ Հարբորդի առաքելությունը Երևան ժամանեց 1919 թ. սեպտեմբերի 29-ին: Հարբորդը ներքուստ գոհ լինելով Քեմալի հետ հանդիպումից՝ արտաքուստ

---

[1] Նույն տեղում էջ 214:

[2] «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1965, էջ 45:

[3] Ջոն Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան 1983, էջ 239:

[4] Հրաչիկ Սիմոնյան, Թուրք-Հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան 1991, էջ 358-359:

[5] Տե՛ս Երվանդ Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան 1964, էջ 483:

[6] Տե՛ս Е.К.Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван 1962, էջ 436:

իրեն ցույց էր տալիս որպես հայ ժողովրդի բարեկամ և շնորհակալություն հայտնելով հայերի կողմից ցույց տված ջերմ ընդունելության համար՝ ասում է. «Ամերիկան հետաքրքրվում է Հայաստանով և նրա ճակատագրով, ապացույց իմ Հայաստան գալս: Ես եկել եմ ոչ թե հաճույքի, այլ իմ վրա դրված պարտքը կատարելու»[1]: Կասկած չկա, որ նա իր վրա դրված պարտքը կատարել էր Քեմալի հետ հանդիպման ժամանակ, որից հետո ի վնաս հայ ժողովրդի շատ բան փոխվեց: Իսկ նրա ներկայացրած հաշվետվությունը, որի արդյունքները ամփոփվել էին «Մերձավոր Արևելքի իրավիճակը» զեկուցագրում, ներկայացնում էր, որ Արևմտյան Հայաստանի գյուղերն ու քաղաքները ավերակների մեջ են, երկիրը ծառազուրկ է, ածուխ չկա, իսկ Անդրկովկասի հանրապետություններին ներկայացնում է որպես կաշառվող, անընդունակ և սննկացած[2]: Ինչպես երևում է, գեներալ Հարբորդի պատվիրակության եզրակացությունը Հայաստանի վերաբերյալ շատ կարևոր է եղել սենատորներին կողմնորոշելու համար, քանի որ 1919 թվականի օգոստոսին Փարիզից Հայաստանի կառավարությանն ուղարկված հաղորդագրություններից մեկում շեշտվում է, որ «իրադրության մասին նրա զեկուցումը որը սպասվում է սեպտեմբերի վերջին, մեծ նշանակություն է ունենալու ոչ միայն ԱՄՆ-ում, այլև դաշնակից և միացյալ երկրներում»[3]: Համանման մի հայտարարությամբ էլ հանդես եկավ սենատոր Քինգը, ով, ինչպես երևում է, խորապես դժգոհելով Ամերիկայի վարած դիրքորոշումից, հայտնում է. «1919 թ. փետվարին Քեմալի ելույթից շատ առաջ դաշնակիցները պատրաստ էին լուծել Հայկական հարցը բարյացակամորեն, երբ հանկարծ Միացյալ Նահանգների կառավարությունը հայտարարեց հարցի լուծմանը մասնակցություն ունենալու իր ցանկության մասին և խոստացավ վերջնական պատասխանը ներկայացնել նույն թվականի օգոստոսին կամ սեպտեմբերին»[4]: Այստեղ հարց է ծագում՝ ինչու՞ օգոստոսին կամ սեպտեմբերին, քանի որ սպասվող Հարբորդ-Քեմալ հանդիպումով է պայմանավորված եղել Ամերիկայի վերջնական դիրքորոշումը մանդատի հարցում: Վերջապես, ինչպե՞ս հասկանալ, որ Հայաստանով շահագրգռված Ամերիկան պատվիրակություն է ուղարկում տարածաշրջաններում ուսումնասիրություններ կատարելու, և Հարբորդը Հայաստան է ժամանում Մ.Քեմալի հետ հանդիպումից հետո միայն:

Հարկ ենք համարում նշել, որ Ամերիկայում Հայաստանի մանդատը ընդունելու գործում տեղի թե՛ հասարակական և թե՛ քաղաքական գործիչները միակամ չեն եղել. նույնիսկ նախագահ Վիլսոնը, հակառակ իր հայամետ հայտարարությունների, վճռականություն չի ցուցաբերել: Այս առիթով 1919 թ. փետրվարի 25-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար Սոննինոն Կ.Պոլսում գտնվող Իտալիայի գլխավոր կոմիսար Սֆորցային ուղղած թիվ 465 հեռագրով հայտնում է. «Ամերիկյան տարբեր աղբյուրներից ստացված տեղեկություններից երևում է, որ հաստատվում են լորդ Միլլերի ենթադրություններն այն մասին, թե քիչ հավանա-

[1] Սիմոն Վրացյան ,Հայաստանի Հանրապետություն, Երևան 1993, էջ 639:
[2] Տե՛ս Գ. Գալոյան, նշվ.աշխ. էջ 212:
[3] «Բանբեր Հայաստանի արխիվների» N 2, Եր.,1965, էջ 36-37:
[4] Ն. Ադոնց Հայկական հարց հատոր Ա,1996, էջ 162:

կան է, որ Վիլսոնը կարգադրի կոնգրեսի հանրապետական մեծամասնությանը, որ նրանք վերջին նստաշրջանում հավանություն տան արևելյան պատասխանատվությունը ստանձնելու հարցին (խոսքը Հայաստանի մանդատի մասին է-Ն.Ս.)»[1]: Այս ամենը ավելի համոզիչ դարձնելու համար բերում ենք ևս մեկ փաստ Ավ. Ահարոնյանի Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան քաղաքական օրագրից, որը գրի է առնվել 1919 թ.ապրիլի 10-ին. «Ամերիկան (հասարակական կարծիք եւ կառավարութիւն) միաձայն չէ այդ մանդան ընդունելու խնդրում եւ Մոնրոյի սկզբունքը տակաւին արգելք է այդ միաձայնությանը»[2]:

Հայաստանի մանդատի շուրջ համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները կասկածի տակ էին դնում ԱՄՆ-ի կողմից մանդատի ստանձնումը: Այս առնչությամբ ուշագրավ գրառումներ կան Ավ. Ահարոնյանի վերոնշյալ օրագրում: Նա 1919 թ. սեպտեմբերի 30-ին հանդիպում է Լեոն Բուրժուային վերջինիս բնակարանում: Զրույցը բնականաբար հայ ժողովրդի արդի կացության՝ մասնավորապես Հայաստանի մանդատի մասին էր. «Ֆրանսիան անզոր է, բայց եւ այնպես ձեր դրութիւնը անմիջական դարման է պահանջում անկախ մանդատից: Ամերիկեան մանդան կասկածելի է թւում ինձ»[3]-ասում է Բուրժուան: Անշուշտ, Անտանտի երկրները այդ օրերին ի նկատի էին ունեցել նաև Մ.Քեմալի ռազմական կարողությունները (բանակի թվաքանակը 100 հազարի էր հասնում), ուստի առանց հապաղելու Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնը 1919թ. հոկտեմբերին Լոնդոնում Պողոս Նուբար փաշային հայտնում է հետևյալը. «Ամերիկան Հայաստանի մանդան ընդունելու չէ: Մեր դրությունը ծանրանում է նրանով, որ Մուստաֆա Քեմալը 100 հազար զօրք ունի եւ որևէ պետութիւն յանձն չի առնի նրան այդտեղից զէնքի ուժով հեռացնելու պատիւը «[4]:

Փաստորեն, 1919 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների իրադարձությունները մեզ հուշում են Ամերիկայի կողմից Հայաստանի մանդատը ընդունելու անհնարինության մասին: Մենք տեսանք, թե ինչպես 1920 թ. հունիսին Ամերիկայի սենատը մերժեց Հայաստանի մանդատը: Ֆրանսիայի պրեմիեր մինիստր Կլեմանսոն ԱՄՆ-ի ներկայացուցիչ Փոլքից տեղեկացել էր, որ. Միացյալ Նահանգները ոչինչ անել չի կարող մինչև կոնգրեսի աշխատանքները: Զորքեր չեն կարող ուղարկվել մի երկիր, որի հետ Միացյալ Նահանգները պատերազմի մեջ չէ: Հայաստանի մանդատի հարցը նախագահ Վիլսոնը կներկայացնի ԱՄՆ-ի կոնգրեսի քննարկմանը[5]: Ամերիկայի, ինչպես նաև մյուս դաշնակից տերությունների վարած անվճռական քաղաքականության հետևանքով Հայաստանը հայտնվեց Թուրքիայից սպասվող նոր արհավիրքի առջև, որի ճիշտ բնութագիրը տվել է սենատոր Քինգը: Նա կրկին մերկացնելով Ամերիկայի վարած քաղաքականությունը՝ հայտարարում է. «Նախքան պրեզիդենտը կուղարկեր իր ուղերձը կոնգրեսին, մենք

[1] Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1918-1923թթ. հ., Բ , Երևան 2010, էջ 41:
[2] Ավ.Ահարոնյան, նշվ. աշխ., էջ 18:
[3] Նույն տեղում էջ 29:
[4] Նույն տեղում էջ 31:
[5] Տիգրան Սահակյան, Ցավալի պայմանագրեր, Երևան 2007, էջ 220:

ստույգ տեղեկությունների հիման վրա նրան տեղեկացրել էինք, որ սենատորները բացասական վերաբերմունք ունեն, որ ուղերձը անպայմանորեն կմերժվի և այդ մերժումը «հրավեր կլինի Հայաստանի թշնամիներին՝ հարձակվելու նրա վրա»[1]: Նախ՝ Վիլսոնը վճռական չգտնվեց ազդելու հանրապետականների վրա, ինչպես հայտնում է Լլոյդ Ջորջը. «Դժբախտաբար Վ.Վիլսոնը ոչ մի փորձ չարեց ազդելու հանրապետական կուսակցության լիդերների վրա, նույնիսկ նրանց, ովքեր անկեղծորեն համակրում էին Ազգերի լիգայի նրա նախագիծը»[2]: Իրավացի էր Քինգը, որ այդ ուղերձի մերժումը եղավ հետևանքը այն բանի, որ Թուրքիան 1920թ. սեպտեմբերին հարձակվեց անպաշտպան Հայաստանի վրա (չնայած այդ ժամանակ Քեմալը համակողմանի օգնություն ստացավ նաև բոլշևիկյան Ռուսաստանից): Ցավալի է նաև, որ Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն Հայաստանի նկատմամբ անտարբերության մասին տեղյակ լինելով՝ ասում է. «...Ֆրանսիան ոչինչ չի կարող անել, Մեծ Բրիտանիան ոչինչ չի կարող անել, Իտալիան ոչինչ չի կարող անել, ներկայումս Ամերիկան ևս ոչինչ չի կարող անել: Մնում է տեսնել, որպես այս ամենի արդյունք՝ արդյոք՞ հայեր կմնան»[3]:

Երկարատև քննարկումներից հետո վերջապես 1920 թ. ապրիլին Իտալիայի Սան-Ռեմո Դևաշան վիլլայում հրավիրվեց Անտանտի գերագույն խորհրդի նիստը, որտեղ էլ ԱՄՆ նախագահ Վիլսոնին ներկայացվեց մի հռչակագիր, որում խնդրում էին վերցնել Հայաստանի մանդատը: Ամերիկայի կողմից այդ մանդատի վերջնական մերժման դեպքում դաշնակից տերությունները խնդրում էին Վիլսոնին լինել միջնորդ-դատավոր Թուրքիայի և Հայաստանի սահմանների հարցում[4]: Թեև Հայաստանի մանդատի ընդունման հետ կապված ԱՄՆ-ը 1920 թվականի ապրիլը 24-ին ճանաչեց Հայաստանի անկախությունը, այնուամենայնիվ, սենատը հունիսի 1-ին ձայների մեծամասնությամբ մերժեց մեզ համար անչափ կենսական նշանակություն ունեցող մանդատը: Իմ համոզմամբ սենատի կողմից Հայաստանի մանդատի ընդունման դեպքում Սևրի պայմանագրով նախատեսված շուրջ 160 հազ.քկմ տարածությամբ Միացյալ անկախ Հայաստանի գոյությունը ապահովագրված կլիներ: Բայց ԱՄՆ-ի սենատի մեծամասնությունը հրաժարվեց մանդատից՝ բերելով մի շարք պատճառաբանություններ:

Սենատոր Վիլյամ Սմիթը վրդովված հայտարարեց. «Հայաստան երկիրը, ինչպես նկարագրված է միսիայի կողմից, անմշակ ու անբերրի ամուլ երկիր է: Ֆրանսիան և Անգլիան վերցրել են նավթով հարուստ հողերն ու պղնձի հանքերը: ... Միացյալ Նահանգներին նրանք առաջարկում են այն, ինչ ոչինչ չի բերելու, բայց խլելու է չափազանց շատ գումարներ և մարդկային կյանքեր»[5]: Ուշագրավ է նաև այն, որ 1920 թ. նոյեմբերի 10-ին Տոկիոյում Իտալիայի դեսպան Պաուլուչին հեռագիր է հղում Իտալիայի արտաքին գործերի նախարար Սֆորցային և հայտնում, որ Ճապոնիայում ամենահեղինակավոր պարբերականներից մեկը՝ «Նիչի-Նիչի

[1] Գ. Գալոյան, նշվ.աշխ., էջ 229:
[2] Նույն տեղում, էջ 229:
[3] Տե՛ս Տ.Սահակյան, նշվ.աշխ., էջ 220:
[4] Մ. Արզումանյան, նշվ.աշխ., էջ 258:
[5] Գ. Գալոյան, նշվ.աշխ., էջ 225:

Շիմբունը», հոդված է տպագրել, որտեղ ասվում է. «Սենատը 65 դեմ, 12 կողմ ձայներով մերժեց առաջարկը (խոսքը Հայաստանի մանդատի մասին է - Ն.Ս.)՝ պատճառաբանելով, որ Հայաստանում անհրաժեշտ կլինի պահել 50-250 հազարանոց բանակ, որի տարեկան ծախսը կգերազանցի 150 միլիոն դոլլարը, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները ի վիճակի չէ նման ծանրություն կրել»[1]: Դրանից հետո Անտանտի երկրները Հայաստանի մանդատն առաջարկում են Նորվեգիային և Կանադային, սակայն երկուսն էլ նախատեսված ծախսերի մեծության պատճառով հրաժարվում են ընդունել,[2] գրում է «Նիչի-Նիչի Շիմբուն» պարբերականը: Նույնիսկ սենատոր Սմիթը վախ է արտահայտում, թե «Բրիտանիան իր իշխանության տակ ունի Միջագետքը, Ֆրանսիան՝ Սիրիան, իսկ ամերիկացիներս կտեղադրվենք որպես բուֆեր ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի, մենք կվերածվենք բուֆերի ընդդեմ ռազմատենչ այդ ժողովուրդների»[3]: Ինչևիցե, փաստը մնում է փաստ, որ տվյալ ժամանակաշրջանում Ամերիկայի համար շահավետ չէր Հայաստանի մանդատի ընդունումը, ու թեև ցավոք կյանքի չկոչվեց Սևրի պայմանագիրը, այնուամենայնիվ նա մնում է որպես միջազգային փաստաթուղթ, որով իրավունք էինք ստանում ապրելու մեր պատմական հայրենիքի մեծագույն մասում:

Այսպիսով, եկանք այն եզրահանգման, որ Ամերիկայի կողմից Հայաստանի մանդատի մերժումը պայմանավորված էր **1**. Խալիտե Էդիպի, Բեքիր սամի բեյի և Մ.Քեմալի վարած ճկուն դիվանագիտությամբ, **2.** Հարբորդի պատվիրակության ներկայացրած եզրակացությունից **3**. Հայաստանի վրա ծախսվելիք հսկայական գումարի չափից, որը, ըստ սենատոր Սմիթի, ոչինչ չէր բերելու ԱՄՆ-ին, և ԱՄՆ-ի խուսափողական դիրքից՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հետագա բարդություններից:

Нвер Симонян, Про мандат Армении, – После Первой мировой войны, казалось, что США, после объявления В. Вильсона в пользу армян, примет мандат Армении. Но принимая во внимание некоторые обстоятельства, Сенат США не принял его. И вопрос о существовании соединенной, независимой Армении, которая была запланирована на Севрском договоре, осталась на бумаге.

Nver Simonyan, About the Mandate of Armenia, – After the first world war, it seemed that The USA would take the mandate of Armenia following Woodrow Wilson’s Pro-Armenian announcement. But taking into consideration some circumstances The Senate of the USA didn't accept it. And the question of the united, independent Armenia's existence which was planned by the treaty of Sevres, remained on paper.

Նվեր Սիմոնյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտ, Տավուշի մարզի Կիրանց գյուղի Գ. Վարդանյանի անվ. հիմն. դպրոցի պատմություն առարկայի ուսուցիչ:

[1] Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1918-1923 թթ , էջ 119-120:
[2] Նույն տեղում էջ 120:
[3] Գ. Գալոյան, նշվ.աշխ., էջ 225: